ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 հոկտեմբերի 2000 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական բարձր տնօրինությամբ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը հաստատվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդ՝ ազատվելով Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդի պարտականություններից: Նաթան Սրբազանի նոր նշանակումը կատարվել է Վեհափառ Հայրապետի կողմից Մեծ Բրիտանիայի ազգային-եկեղեցական իշխանություններին ներկայացված եռանուն ցանկի ընտրությամբ:

Անգլիայի թեմի նախկին առաջնորդ Տ. Եղիշե արքեպս. Կիզիրյանը կանցնի վաստակած հանգստի: Մինչ նոր առաջնորդի նշանակումը Ուկրաինայի թեմի առաջնորդի պարտականությունները ժամանակավորապես կիրականացնի Տ. Աբգար քհն. Գրլոճյանը:

Նորին Սրբության մեկ այլ տնօրինությամբ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանը ազատվել է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի և Համայն Ռուսիո պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցչի պարտականություններից՝ այլ պատասխանատու ծառայության կոչվելու համար:

Մինչ նոր առաջնորդի նշանակումը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պարտականությունները կիրականացնի Սանկտ Պետերբուրգի հայոց հոգևոր հովիվ Տ. Եզրաս աբեղա Ներսիսյանը: